# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ



Մայիսի 31-ին Մոսկվայում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքին:

Հանդիպման ժամանակ երկու Եկեղեցիների հովվապետերն անդրադարձան եկեղեցական կյանքում արձանագրված հաջողություններին, Ռուսաստանի և Հայաստանի հոգևոր վերազարթոնքին: Խոսվեց նաև երկու երկրներում իրականացվող մեծածավալ եկեղեցաշինության մասին, որի առնչությամբ Վեհափառ Հայրապետը Ալեքսի Պատրիարքին հայտնեց Երևանում ռուս ուղղափառ եկեղեցու կառուցման համար Հայաստանի իշխանությունների կողմից կատարված հողահատկացման մասին:

Հանդիպմանը ներկա էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Մոսկվայի Պատրիարքարանի կառավարիչ, Կալուգայի և Բորովի միտրոպոլիտ Կլիմենտը և Իստրինսկի արքեպիսկոպոս Արսենին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*